թեանը. տանք այստեղ մի քանի նմուշներ.

1915—16 թուին Սալար-Մասուդ և Սալար-Ազամ խաները զինուած ձիաւորներով մտնում են գիւղ և առնում 600 թուման փող. նոյն 1915/16 թուին՝ զինուած ձիաւոր խմբով գալիս է Զարլանգ Մահմուդ խանը—Զէրաղ-Ալի խանի որդին և առնում է 100 թուման, այնուհետև նա կատարեալ մի պատուհաս է դառնում խեղճ գիւղացիութեան գլխին. անվերջ, սիստեմատիկ կերպով հարստահարելով նրանց, այսպէս՝

1917 թուին առնում է 100 թուման.
» » Մայիսին » » 150 »
» » Ցունիսին » » 100 »

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Ազքատ	370
2	Զունևոր	65
3	Միջակ	620
4	Ունևոր	600
5	Հարուստ	160
	Ընդամենը	1815 *

ՎԵՐԻՆ ԽՕՅԳԱՆ

Սանգիբարանից դէպի հիւսիս, մօտ երեք քառորդ ֆարսախ հեռու, մի ընդարձակ դաշտի վրայ փռուած է հայաբնակ Վերին-Խոյգան գիւղը. սա հարաւ-արևմտեան կողմից սահմանակից է Դաջան հայաբնակ գիւղին, իսկ հիւսիս-արևմտեան և արևելեան կողմերից Տաշքիշան և Խամսլու պարսկաբնակ գիւղերին։

Գիւղի դիրքն այստեղ խիստ գեղեցիկ է և բանաստեղծական. պճնազարդուած է բարդիների, ուռենիների և կա-

* Սանգիբարանն ունեցել է մի տաղանդաւոր ծերունի քահանայ՝ Տէր Գաբրիէլ անունով, որ յայտնի է եղել ամբողջ գաւառում. սիրում է եղել յաճախ վիճաբանել Մահմետական մոլլաների ու Բողոքական միսիոնարների հետ կրօնական բարդ խնդիրների վրայ. ունի բաւական ընդարձակ բանաստեղծական գրուածքներ —թէ հայերէն, թէ պարսկերէն և թէ տաճկերէն. բայց դժբախտաբար մենք հնարաւորութիւն չունեցանք ձեռք բերել այդ հետաքրքրական բանաստեղծութիւնները, որոնք շահեկանութիւնից զուրկ չէին լինի ընթերցողների համար։